Ե. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 11 ՄԱՅԻՍ 1902 — ԹԻՎ 415

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ
Արտասահմանի համար տարեկան 15
Վեցամսեայ

Եվրոպայի համար
Տարեկան 3 ռ.
Վեցամսեայ 1.50 »

Առանձնական տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ. երեքեն ավելի անգամներու համար 20 0/0 զեղչ կրելու է։

Վարձայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին։

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ
(20 ՍԱՆԹԻՄ)

Պուլկարիոյ համար ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ յեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԴՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԵԱՆԻԿ ՎՃԱՐԷ

ՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՆՇԱՆԸ

Սրանից մի քանի տարի առաջ յեղափոխական օրգանների մէջ տպված յօդուածները քննադատելը մի տեսակ սրբապղծութիւն էր համարվում, մանաւանդ մոլեռանդ ու անհեռատես կուսակցականների կողմից, որոնք իրենց կուսակցութեան անսխալական լինելու համոզումն ունէին։

Բայց «Նոր Կեանք»ի և «Մարտ»ի մի քանի տարվան սխալ ուղղութիւնը ահագին քննադատութիւնների տեղիք տուեց։

Մեծաքանակ քննադատականներ գրվեցին ժողովրդին և վերակազմեալ Հնչակեաններին համոզելու համար, որ վերոյիշեալ թերթերը ոչ միայն յեղափոխական թերթեր չեն, այլև հակայեղափոխական մտածումների և ձգտումների ամբարներ։ Այդ քննադատութիւնների արդիւնքը այն եղաւ որ նախ հասարակութիւնը պաղեց այդ թերթերից, երկրորդ Վերակազմեալները իրանք պահանջ զգացին իրենց թերթերը վայելուչ բարձրութեան վրա դնել։

Մօտ օրերս քննադատութեան են ենթարկվում, «Դրօշակ»ի երկու խմբագրականները։ Քննադատողները զարգացած և, գոնէ տեսականապէս, արմատական յեղափոխական երիտասարդներ են, ինչպէս լինում են առհասարակ յեղափոխական պրոպագանդիստները։

Գիտենք որ «Դրօշակ»ը երբէք հակայեղափոխական չէ եղած և չի էլ կարող լինել։

Հայ երիտասարդութիւնը, մանաւանդ զարգացած և յեղափոխականօրէն մտածող երիտասարդութիւնը միշտ բաղձացել է որ «Դրօշակ»ը՝ Բաբկէնների և «Պետո»ների օրգանը, միշտ անխառն յեղափոխական լինի և չը ոգեւորվի այնպիսի երեւոյթներով, որոնք զուտ յեղափոխական տեսակէտից վերոյ նշանակութիւն անգամ չունեն։

Բայց վերջին խմբագրականները, ինչպէս հաւատացնում են երիտասարդ քննադատները, ուսանողական մի որոշ, յեղափոխականօրէն մտածող շրջանակի մէջ մեծ ցաւ են պատճառել, որովհետեւ այդ խմբագրականների մէջ փառաբանվում են երեւոյթներ, որոնք կապ չունեն յեղափոխութեան հետ և հայ ժողովրդին բաշխում են անհիմն յոյսեր։

Այս քննադատականները մեզ փաստում են որ մեր յեղափոխականօրէն մտածող երիտասարդութեան մէջ կայ մի տարր, որը գուրգուրալով յեղափոխական գաղափարի վրա, ուշի ուշով հետեւում է մեր ամենաուժեղ և յուսատու յեղափոխական մարմնի օրգանին և նրա ամենաչնչին շեղումների հանդէպ անգամ մեծ ցաւ զգալով՝ իր հասակին ու տէմպերամենտին յատուկ եռանդով առաջ է նետվում այդ շեղումների առաջն առնելու համար։

Սա արդէն «Դէմօրալիզացիա չէ», այլ յեղափոխութիւնը դեմօրալիզայից փրկելու ազդարարնշան, որը և մեր ինտելիգէնտ ուժերի յեղափոխականօրէն պարտաճանաչ դառնալու տրամադրութեան ամենաիրական «նշանն է»։

Այս քննադատութիւնները փաստում են նաեւ որ բացի պաշտօնական, շատ անգամ բռնազբօսիկ, յեղափոխականներից կան և ոչ պաշտօնական յեղափոխականներ, որոնք յեղափոխութեան գաղափարին մօտիկ, միեւնոյն թաւայի մէջ զանազան սօուսներ դնելը աւելորդ և վնասակար են համարում։

* * *

Աւելորդ չեմ համարում առիթից օգտվել այստեղ «Դրօշակը» քննադատող երիտասարդների, ինձ համար ենթադրական, մի կարծիքը ջրել։

Նրանք գրում են—«եթէ խմբագրութիւնը չը կարողանայ տը պագրել, մեր պատասխանատուութեան տակ հրատարակեցէք»։

Ինչպէս երեւում է մի որոշ շրջանակի մէջ կարծիք է կազմվել, որ Դաշնակցութիւնը ընդունակ է իր անդամ խմբագիրների վրա բռնանալ որ, «Դրօշակ»ը կամ Դաշնակցութեան ոև է գործ քննադատող յօդուածներ չը տպագրվեն։

Մենք կարող ենք հաւատացնել մեր բարեկամներին որ Դաշնակցութիւնը այդ «սեսակ ճնշում չի գործ դնում իր անդամների վրա։ Ինձ թւում է որ «Դրօշակ»ի խմբագրութիւնն անդամ չի մերժիլ տեղ տալ այն տեսակ քննադատութիւնների, որոնց միակ նպատակն է վառ պահել յեղափոխական ոգին և բարձր պահել յեղափոխութեան դրօշակը։ «Դրօշակ»ի խմբագրութեան մէջ չը կայ մի մարդ, որ իրեն անսխալական կարծի և յեղափոխութեան մասին դատելը իրեն համար մենաշնորհ ընդունի։

ՎԱՐԴՕ

ԱՅԺՄ ԷԼ ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ՉԵՆՔ

«Եթէ ժամանակին պարտաճանաչ գտնուէինք»։ Այս խօսքերով է վերջանում Դրօշակի 4 թիւի խմբագրականը, որը բացատրում է ինտելիգէնտ ուժի առաջապահ դերը ժողովրդական ազատարար շարժումների ժամանակ, կարճօրէն նկարագրում է ռուս ինտելիգենցիայի նախկին եւ այժմեան գործունէութիւնը, անցնում է 80ական, 90ական թւականների հայ ինտելիգենցիայի շարժմանը, ողբում է ռէակցիան եւ այնուհետեւ մխիթարում է մեր ինտելիգենցիայի սթափման նշաններով, որոնք «Դրօշակ»ը տեսնում է ուսանողութեան մէջ. մանաւանդ, «Միութիւնը» իր ծրագրով ու հինգերորդ համագումարով մեծ ոգեւորութիւն ու յոյսեր է զարթեցնում Դրօշակի մէջ։ Ժամանակին մեր ինտելիգենցիան պարտաճանաչ չէր, այժմ սկսել է պարտաճանաչ դառնալ—այս է Դրօշակի խմբագրականի միտքը։

60ական եւ 70ական թւականների ռուս ինտելիգենցիայի գործունէութիւնը խոր հետքեր թողեց ռուս կեանքի մէջ։ Այդ ժամանակուայ պարզ ու համեստ գործիչները, «նիհիլիստները» թողնում էին ամեն ինչ՝ հարուստ կարիէրայ, ապահով հեշտ կեանք մայրաքաղաքների առաջնակարգ—սալոններում,—եւ դիմում էին «դէպի ժողովուրդ»։ Դա մի ահագին քաղաքական շարժում էր, որ իր նմանը չէ ունեցել պատմութեան մէջ։ Գոռում գոչիւն չըկար այդ շարժման մէջ, ճոճռան երկարաբանութիւնները, հռետորական ճոռոմախօսութիւնները ծիծաղելի էին այս շարժման գործիչներին, որոնք թէ իրանց պարզ կեանքով եւ թէ համեստ, պարզ մտածողութեամբ ամենի համակրութիւնն էին գրաւում։ Գաղափարի մարդիկ էին նրանք եւ գաղափարի համար արտասահմանի ու Ռուսաստանի բարձրագոյն դպրոցները աւարտած երիտասարդները հարիւրներով, հազարներով էին մտնում ժողովրդի մէջ, նրա շորերն էին հագնում նրա հետ միասին գործարաններում ու գիւղերում էին աշխատում, նրա չարքաշ կեանքն էին բաժանում, կըրում էին ինտելիգենտի համար անասելի ծանր աշխատանք ու կեանքի ծանր պայմաններ, եւ այս բոլորը միայն նրա համար, որ կարողանան առանց ոստիկանութեան ուշադրութիւնը գրաւելու ժողովրդին էլ մասնակից անել այն բարիքներին, որ իրանք ձեռք են բերել համալսարաններում։ Արիստոկրատ սալոնների նուրբ մթնոլորտում ամենանուրբ կրթութիւն ստացած օրիորդները, ծնողների հետ ահագին կռիւ մղելուց յետոյ, թողնում էին սալոններն ու պարիզեան մոդաները, գոնեկուհու հասարակ հագուստում մտնում էին գործարանները ուսումն եւ ազատութեան գաղափարը ժողովրդի մէջ տարածելու համար։ Ամեն տեղ էին «նիհիլիստները»։ Մի տեղ իբրեւ գործարանական բանւորներ ու գիւղացիներ, մի ուրիշ տեղ իբրեւ ուսուցիչներ, ֆելդշէրներ, բժիշկներ ժողովրդին ազատութեան գաղափարն էին քարոզում։ Կախաղաններն, դաժան բանտերը, երկարամեայ տաժանակիր աշխատութիւններն խոնաւ հանքերում ու տգսորները չէին վախեցնում նրանց, այլ միայն աւելի ոգեւորում։

Յետոյ եկաւ ռէակցիան։ Բայց այդպիսի տոկուն գործունէութիւնը, այդպիսի եռանդուն պրոպագանդը չէր կարող անհետանալ։ Ժողովրդի մէջ գցած կայծերը աննկարելի կերպով մշում էին, որպէսզի այսօր նորից բոցավառուին։ Յեղափոխական բոցերը նորից սպառնում են լափել

ռուս կառավարութեան բռնակալութիւնը։ Ժողովուրդն է ոտի կանգնել այսօր, կրելով իր կարմիր դրօշակի վրայ իր ուսուցիչների փայփայած ազատութեան գաղափարը—տնտեսական եւ քաղաքական ազատութեան—նա անվախ ծածանում է ազատութեան դրօշակը. անզօր ոստիկանութիւնը, գլուխը կորցրած, այլ եւս չէ կարողանում տապալել այդ դրօշակը։ Բազմատանջ գիւղացին էլ սկսել է հասկանալ իր չարիքների իսկական պատճառը. նա սկսել է հասկանալ, որ Ռուսաստանի քրոնիկական սովը Նախախնամութեան պատիժը չէ չը գործած մեղքերի համար, այլ կառավարութեան բռնակալ ռէժիմն է. եւ Ռուսաստանի զանազան կողմերից լսւում է արդէն գիւղացու առայժմ թոյլ բողոքի ձայնը բռնակալութեան դէմ։ Ոստիկանութիւնը օրհասական ճիգեր է թափում. խրստացրած հսկողութիւն, ոազմական դրութիւն, բանտեր, աքսորներ ..., ոչինչ չէ օգնում. կախաղանն է բարձրանում իր գաղափարասպան դերը. անօգուտ.. յեղափոխական շարժման խրոխտ ալիքները ջարդում են ամեն խոչնդոտ, տարածւում են աւելի եւ աւելի լայն։ Զգայուն ինտէլիգէնտը սկզբից գրաւեց իր առաջապահ տեղը։ Ռուս ուսանողութիւնը շատ շուտ հասկացաւ իր պատմական դերը եւ, հաւատարիմ 60ական թուականների գործիչների կտակին, իրան նետեց ժողովրդական շարժման եռացող ալիքների մէջ։ Ծաղրելով կառավարութեան սոսկալի սպառնալիքները՝ բռնի զինուորագրութիւնն ու երկարամեայ տաժանակիր աշխատանքը, նա բացարձակօրէն կանգնել է յեղափոխական հողի վրայ եւ բռնակալութեան տապալումն է պահանջում, բանւորի հետ միասին յեղափոխական կարմիր դրօշակն է ծածանում։ Ռուս ինտէլիգէնտ ուժը յեղափոխական գործի ասպարէզն է մտել. յեղափոխական թերթերը տասնեակներով են մտնում ժողովրդի մէջ, «արգիլուած» բրոշիւրները հազարներով են մուտք գտնում Ռուսաստան. գաղտնի տպարանները հարիւր հազարներով են տպագրում թռուցիկ թերթեր, եւ այս բոլորը կատարվում է ոստիկանութեան քթի տակ. ամենակարող Հարի բռնակալ ուժը ծաղրելով։ Յեղափոխական գրիչ, յեղափոխական գործ է սա... Դրօշակի «Կովկասեան խաբրիկներն» անգամ ոգեւորել են այս կուսով. «Խաբրիկների» վերջին նամակը (Դրօշակ թիւ 4) այնպիսի հրճւանքով է խօսում այս կուսի մասին, կարծես, «խաբրիկները» հէնց առաջին օրից այդ կուսը քարոզած լինէին եւ այժմ իրենց իդէալների իրականացումը տեսնելիս լինէին... Ուրախանալ միայն կարող ենք, որ «Խաբրիկներին» էլ դիպել են յեղափոխական շարժման ալիքները...

Պարտաճանաչ է ռուս ինտէլիգէնցիան։

Իսկ մեր ինտէլիգէնցիա՞ն, մեր ուսանողութի՞ւնը...

«Հայ ինտէլիգէնցիայի չրջաններում երեւում են սթափման նշաններ։ Նրա ամենազգայուն մասը՝ ուսանող երիտասարդութիւնը ցոյց է տալիս առանձնապէս հետաքրքրութիւն», ասում է Դրօշակի վերջին խմբագրականը։ Այնուհետեւ ոգեւորւած եւ ինքնաբաւական կերպով նկարագրում է Եւրոպայի հայ ուսանողական Միութեան հինգերորդ համագումարը, որտեղ համախմբուած ուսանողները «լուրջ բանաւոր վիճաբանութիւններով լուսաւորում էին իրար»։ «Թրքահայոց խնդիրը այժմ արդէն ուսանողական առաջնակարգ մտահոգութիւնն է, նրա ծրագրի կեդրոնը», եւ պարտաճանաչ ուսանողութեան համագումարը «մի շարք որոշումներով կարողացաւ յարկել իր ծրագիրը»։

Ցնծացէք, հայոց ազատասէր հոգիներ։ Սարկութեան ժամանակները անցան ընդ միշտ. յեղափոխական գործը անխախտ հիմունքների վրայ է դրուած. «Նոր Եւրոպան», ինչպէս յայտնեց «ԴՐՕՇԱԿ»ի նախկին համարը, «ցնորքի, իդէալի, երազների Եւրոպան» կուսում է մեզ համար «Հին Եւրոպայի» դէմ. «ոգեւորութեան, բողոքի ձայները» դղրդեցնում են «ամբողջ աշխարհը»։ Մեր ուսանողութիւնը իր ձեռքն է առել յեղափոխական գործը, դարձրել այդ գործը իր «առաջնակարգ մտահոգութեան» առարկան եւ «յարգելով իր ծրագիրը», առաջ է տանում այդ գործը։ Ցնծացէ՛ք։ Յաղթութիւնը մօտ է... բայց, աւա՜ղ, այս բոլորը գոյութիւն ունի մի միայն «ԴՐՕՇԱԿ»ի երեւակայութեան մէջ... «Նոր Եւրոպայ» չկայ, (*) «ձայն բողոքի, ձայն ոգեւորութեան «Դրօշակ»ի հիւանդ ականջներին են միայն թւում, իրական կեանքի մէջ այդ ոգեւորութիւնը գոյութիւն չունի. եթէ ժամանակառ ժամանակ լսւում են թոյլ բողոքի ձայներ քաղաքականապէս թոյլ անհատների բերանից, նրանք կորչում են դիպլոմատիական անվերջ անապատում առանց անդրադառնալու, հենակէտ գտնելու, առանց արձագանքի։ Կամ, ամենաշատը, Բիւլբիները «ցինկարար հեգնում են» այդ ձայները, ինչպէս հաստատում է «Դրօշակ»ը ոգեւորւած Նոր Եւրոպայի նկարագրութիւնից քիչ յետոյ։ «Դրօշակ»ի երեւակայած ուսանողական Միութիւնն էլ գոյութիւն չունի։ Զըկայ այն խանդավառ, յեղափոխական գաղափարներով ոգեւորւած երիտասարդութիւնը, որը ցանկանում է տեսնել Դրօշակը ուսանողական Միութեան մէջ, չրկայ այն կախաղաններից ու աքսորներից չը վախեցող ինտէլիգէնտ ուժը, որը միայն կարող է «մեծ գործ տեսնել», չրկայ «հաւատով զինւած և նախաձեռնութիւն ունեցող ինտէլիգէնտների խումբը», այդ բոլորը մի միայն «ցնորքներ, իդէալներ, երազներ» են. Դրօշակի գարնանային լուսնկայ երեկոների ցնորքներն...

Ուսանողական Միութիւնը նոյն իսկ չէ կարողացել հասկանալ իր իսկական կոչումը, իր պարտքը, քաղաքական արդի կացութեան պահանջը։ Հինգերորդ համագումարի որոշումները հեռու են պարտաճանաչութիւնից, հեռու են որ և է յեղափոխական կոծից. այդ որոշումները ահագին տեղ են տալիս նոյն երեւակայական Նոր Եւրոպայի ուշադրութիւնը մուրալուն, ահագին՝ տասնեակ հազարների բիւրղէ են ընդունում Եւրոպայում պրօպագանդ վարելու համար, այնինչ մեր ժողովուրդը, որը աւելի, քան երբ և իցէ կարօտ է պրօպագանդի, ուշադրութեան չէ առնւում. Միութիւնը ջանքեր չէ խնայում օտար լեզուն.

(*) Տես Լեւոն Աթաբէկեանի յօդուածը այդ մասին «ՇԱՐԺՈՒՄ»ի մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա.

ԳԼՈՒԽ Բ.

Շաբաթը անցնում էր որ Ծաղիկեանը հասել էր Ն. քաղաքը. մի շաբաթ երեկոյ, նա իր սենեակում նստած մտածում էր.

—Զարմանալի քաղաք է. շատ փոքր, բայց ամեն ազգ էլ իր ներկայացուցիչը ունի այս տեղ։ Հրէա, թաթար, ռուս, լեհ, գերմանացի, ֆրանսացի, յոյն, ցիգան։ Ի՞նչու են հաւաքվել այս տեղ. ի՞նչ կայ։ Ես չէի կարծում որ այսչափ խառնակ բնակչութեամբ տեղ լինի։ Այստեղի հայերը զարմանալի են. ուտելու, խմելու եւ քնանալու մեծ ընդունակութիւն ունեն. իսկապէս հանգստանալու տեղ։ Կեր, արբ եւ ուրախ լեր։ Առաւոտեան վերկաց, խաբիր թաթարին, ռուսին, խոխոլին...

Ի՞նչպէս պէտք է ապրեմ այս տեղ... իսկապէս աքսորավայր։

Դիրք չը կայ, լրագիր չը կայ։

Ծաղիկեանը այս հաշուեւութեան մէջ էր, երբ իր սենեակի դուռը բաց վելով ներս մտաւ հայ դպրոցի երգեցողութեան ուսուցիչը։ Մի ոչխարի դէմքով երիտասարդ ու բարի երեկոյ մաղթելով Ծաղիկեանին՝ սեղմեց նրա ձեռքը և կողքին նստելով ասեց.

—Ուրախ եմ որ տանն էք։ Թէեւ լսել եմ որ միշտ տանն էք լինում։ Ի՞նչու չէք ծանօթանում քաղաքացիների հետ. ամենքն էլ ձեզնով հետաքրքրվում են. ասում են որ նոր մեծ վարժապետը խուճուր (տարօրինակ) մարդ է։ Տղայքը արդէն սկսել են ձեզ սիրել. մանաւանդ աղքատների աղաները։ Ձէրտէրը, որի չորթունքները ձեր անունը տւած ժամանակ պատռվում են, խօսքը մեր մէջը՝ երկու սիրուն աղջիկ ունի. բայց փող չունի, այս տեղ առանց փողի աղջիկ չեն առնում, իսկ նա համոզված է որ գաղափարի մարդիկը փողով աղջիկ չեն փնտռում, շարունակ ձեզ է գովաբանում, միայն այն ծուխերի մօտ, որոնք հասած աղջիկներ չունեն։ Ժամկոչը ձեզ վրայ շատ է բարկացել, որովհետեւ դուք նրա հրաւէրին պատասխան չէք տւել։ Քիրիլ աղան էլ շատ է բարկացել, դուք նրան չէք այցելել. Այստեղի բոլոր ազգային նոր եւ հին պաշտօնեաները պարտաւոր են նրա տունը գնալ. նրա քէֆը հալը հարցնել։ Նա քաղաքի ամենահարուստ մարդն է. նահանգի ամենահարուստ, նահանգապետի հետ ճաշի նստող Սարաֆովը Քիրիլ աղայի մօրաքրոջ տղան է. այդչափ հարուստ եւ այդպիսի ազդեցիկ ունեցող մարդին անտեսելը կատարեալ ոճրագործութիւն է համարւում այս տեղացիների համար։

Վարժուհու հետ իսկ էք վարվել. նա էլ ազդեցիկ է Քիրիլ աղային. բողոքել է. տներում խօսում են, աղջիկները եւ կիները ասում են որ դուք կաւալեր չէք։ Եկեղեցի էլ չէք գալիս. Մանուէլեան տիկինը, որ շատ բարեպաշտ եւ ազդեցիկ կին է, իր այրիութեամբ, արտակարգ կեղեցկութեամբ, սկսել է տարածել որ դուք անաստւած էք, սոցիալիստ էք։ Այդ տիկնոջ լեզուն շատ չար է. պէտք է աշխատել նրա լեզուի տակ չրկնել։

Երգեցողութեան տիրացու վարժապետը թերեւս դեռ երկար շարունակէր իր պարկը դատարկել եթէ Ծաղիկեանը չը միջամտէր.

—Բայց պարոն, ձեզ ո՞վ թոյլ տրւեց որ գաք, ինձ հետ այդպէս ընտանեբար վարվէք, եւ դլուխս տաք ինձ համար բոլորովին անհետաքրքիր տեղեկութիւններով։

—Ինչպէս թէ ով թոյլ տւեց, դժգոհութեամբ առարկեց տիրացու վարժապետը, չէ որ մենք պաշտօնակիցներ ենք, չը նայելով որ դուք աւագ ուսուցիչ էք, բայց եւ այնպէս մենք պաշտօնակիցներ ենք։ Մենք իրար պէտք է պաշտպանենք. ես ձեր լաւութիւնն եմ ուզում։ Դուք նոր մարդ էք. չը գիտէք թէ որի հետ ինչպէս պէտք է վարվել. ես ու ուզում եմ ձեզ ծանօթացնել տեղական պայմանների հետ։ Վաղն էլ, պէտքը եղած միջոցին դուք ինձ կը պաշտպանէք։ Ես էլ ձեզ նման օտարական եմ. տէր ու տիրական չունեմ, բայց ձեր դրութիւնը ուրիշ է, դուք վաղը կարող էք ազդեցիկ դառնալ. ես զգում եմ այդ. դուք որչափ ձեզ հեռու էք պահում, այնքան աւելի ձեզնով հետաքրքրվում են. տէրտէրը ձեր բարեկամն է. վաղը տիկին Մանուէլեանն էլ կը բարեկամանայ ձեզ հետ եւ քաղաքը ձեզ համար առնված կը լինի։ Այդ ամենը ես տեսնում եմ եւ այդ պատճառով էլ շտապում եմ ամեն բան պարզել ձեզ, որ դուք մի սխալ քայլ չանէք եւ ձեր ձեռքով ձեր բախտին քար չը նետէք։

—Բայց խնդրեմ ասացէք, այսպիսի մի քաղաքում ի՞նչ բախտաւորութիւն կարող եմ ունենալ ես, ժպտալով ընդհատեց Ծաղիկեանը։

—Ինչ բախտաւորութի՞ւն, աւելի մեծ ոոճիկ, հարուստ կին, փարթամ բնակարան եւ հանգիստ կեանք։ Մի թէ՞ այդ փոքր բախտաւորութիւն է։

—Դրանցից ոչ մէկի կարօտը չեմ զգում ես, պարոն Խաչատուր. շնորհակալ եմ ձեր բարեացակամութիւնից։ Մի ուրիշ օր այդ մասին կը խօսենք։ Այսօր ինձ հանգիստ թողէք, ես նամակներ ունեմ գրելիք։ Անշուշտ դուք էլ քնելու տրամադիր կը լինէք, որովհետեւ վաղը կիրակի է եւ դուք եկեղեցի պէտք է գընաք։

—Ուրեմն ասում էք որ գնամ էլի՞, ինձ դուրս է՞ք անում։

—Ոչ, ոչ պարոն Խաչատուր, դուրս չեմ անում. այլ անկեղծօրէն յայտարարում եմ որ գործ ունեմ եւ ձեր ներկայութիւնը խանգարում է ինձ։ Մի ուրիշ, աւելի ազատ օր եկէք եւ երկար ու բարակ կը խօսենք։

—Էհ, այդ ուրիշ խնդիր, ես էլ կարծեցի որ ինձնից ձանձրացաք. ես էլ անկեղծութիւնը շատ եմ սիրում, եւ շնորհակալ եմ որ անկեղծօրէն էք վարվում ինձ հետ։ Ես համոզված էի որ դուք անկեղծ մարդ էք. եւ հակառակ ծոտի պոտի քաղաքավարական պայմաններին։ Ուրեմն բարի գիշեր եւ ցը տեսութիւն. վաղը մեզ մօտ ճաշի համեցէք։

—Շնորհակալ եմ, ճաշի չեմ կարող գալ. մի ռուս ծանօթ ունեմ, նրա մօտ եմ հրաւիրված։

(Շարունակելի)

—✠—

բով ժողովածու ու օրկաններ հրատարակելու. այնինչ մեր ժողովուրդը թէ Թիւրքահայաստանում և թէ Կովկասում զուրկ է ընթերցանութիւնից. Միութիւնը որոշում է հոգ պատրաստել Գերմանիայ մէջ հայկական դասը պաշտպանելու, բանախօսութիւններ կազմակերպել Գերմանիայ և Իտալիայ կարեւոր կենտրոններում, իսկ թէ Թիւրքահայաստանում ու Կովկասում հայկական դասը պաշտպանելու պարտականութիւնը հոգ կայ թէ չէ. դրանով Միութիւնը շատ քիչ է հետաքրքրւում. Պրոպագանդ Եւրոպայում այս է Միութեան յեղափոխական ծրագիրը, մուրացկանութիւն է Միութեան նշանաբանը.... մի քայլ է մացել միմիայն, որ Միութիւնը, իր պրոպագանդը ուժեղացնելու և արդիւնաւէտ դարձնելու համար, կանգնի քրիստոնէական-մարդասիրական հողի վրայ և «քրիստոնէական» Եւրոպայից մուրայ Հայաստանի ազատութիւնը հաստատելով Եւրոպացի ֆիլեսթինէրին, որ նապաստակ, վախկոտ հայը հեռու է յեղափոխութիւնից. ինչպէս այդ անուամբ էին տարիներ առաջ մեր պատօրները պատօր Լէեպսիուսի օգնութեամբ, հայի Լէպսիուսի, որը, Դրօշակի ասելով, «նոր Եւրոպային» է պատկանում. Ահա այս խղճուկ Միութիւնը, որ ռուս ուսանողութեան հետ համեմատած անդամալոյծ գաճաճ է միայն, «պիտի ընդգրկէ ամբողջ հայ ուսանողութիւնը Եւրոպայում ու Ռուսաստանում». այս Միութիւնն է որ պիտի ներկայացնի Դրօշակի առաջապահ ինտելիգենտ ուժը, որը «պիտի թափանցէ հասարակութեան բոլոր խաւերը. պիտի փչրէ նրա սառցային անտարբերութիւնը պիտի մաքառէ» և ուրիշ հազար քաջագործութիւններ պիտի կատարէ... «ցնորք, իդեալ, երազնե՞ր».

Պարոններ, ձեր ընթերցողներին էք ծաղրում, թէ ձեզ էք խաբում: Ո՞ւր է յեղափոխական կարմիր ուսանողութիւնը, որ ձեզ առիթ տուեց մելնելու ռուսական 60-ական թւականների և այժմեան գործիչներին, ո՞ւր է նրա յեղափոխական ծրագիրը և այդ ծրագիրը յարգող որոշումները: Մուրացիկների համագումար էր հինգերորդ համագումարը: և ոչ պարտաճանաչ ուսանողութեան համագումար: Զիպրիանի ապտակը անարժան կերպով չէր ստացաւ մուրացիկների այդ խումբը, որը յեղափոխական գործին բուն երկրում նպաստող որ և է գործի-ինչքան էլ չնչին լինէր այդ գործը-փոխարէն Եւրոպայի ուշադրութիւնն է մուրում, այնինչ, եթէ մեր յեղափոխական կազմակերպութիւններն ու մեր երիտասարդութիւնը իրապէս պարտաճանաչ լինէին այսօր մենք կարիք չէինք ունենալ մուրալու Եւրոպայի ուշադրութիւնը, այլ կը ստիպէինք, որ Եւրոպան միջամտէր.

Այժմ ալ պարտաճանաչ չենք.

Բուլնցիեան

Ցիւրիխ 15 մայիսի 1902

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Ռուս գիւղացիները իրենց թալանները գործադրած են գիւղական հասարակութեան որոշումներով և տանուտէրերու առաջնորդութեամբ. եւ անոնք այդ թալանները կատարած ըլլալուն մէջ յանցանք չեն գտնար յայտարարելով որ իրենք անօթի էին, նախապէս հարուստ կալուածատէրերէն խնդրած են իրենց օգնել մինչեւ նոր հունձքերը, և վերջինները մերժելուն պատճառով ստիպուած եղեր են իրենց ձեռքով առնել.

Գիւղացիները այնքան պաշար տարած են, որչափ որ կը բաւէ մէկ քանի ամսուան համար թէ իրենց և թէ անասուններուն.

Զանազան քաղաքներ, չը նայած ամենախիստ հսկողութեան, գաղտնի տպարաններու մէջ տպագրուած անթիւ անհամար թռուցիկ թերթեր կը տարածուին. թատրոններու և այլ հանրային հիմնարկութեանց մէջ յանկարծակի անձրեւի պէս կը տեղան յեղափոխական բովանդակութիւն ունեցող այդ թռուցիկները, ու մինչեւ որ ոստիկանութիւնը զանոնք հաւաքէ հասարակութիւնը լաւ մը կը ծանօթանայ անոնց բովանդակութեան հետ.

* * *

Թրանսվալի զօրապետներու ժողովէն յետոյ խաղաղութեան մասին լուրեր ենթադրութիւնները աւելի պակսած են.

Կը կարծուի որ խորհրդակցութիւնները խաղաղութեան մասին նպաստաւոր եզրակացութեան մը չեն յանգած.

Պատերազմը դեռ կը շարունակուի, ու ըստ երեւոյթին, եր կար պիտի տեւէ, որովհետեւ պօերները անձնատուր ըլլալու տրամադիր չեն, իսկ անգլիացիներն ալ կուզեն որ հաշտութիւնը իրենց առաջարկած պայմաններուն համաձայն կայացուի.

Պօերը յամառ, իր քաջութեան և կորովին վրայ յուսադրուած, իսկ անգլիացին իր անսպառելի զօրութեանը. կը շարունակեն պատերազմը, մինչեւ որ ան յանգի իր բոլորովին եղեռնական վախճանին.

* * *

Ֆրանսայի ընտրութիւնները վերջացան. հասարակապետական երեցփոխանները, զանազան գոյներու պատկանող, մեծամասնութիւն կը կազմեն նոր խորհրդարանին մէջ: Այնպէս որ յետադիմականները և արքայականները բոլորովին յաղթուած ու ջախջախուած կը համարուին: Ֆրանսական թերթերը կը հաղորդեն որ, Վալտէք Ռուսօ, նախարարապետը, արդէն նախագահին յայտարարած է որ անոր Ռուսիէ վերադառնալէ վերջ, ինքը պիտի հրաժարի, որովհետեւ իր ծրագիրը արդէն գործադրած կը համարէ և պէտք է որ երեսփոխանական ժողովին մեծամասնութենէն նախարարութիւն մը ընտրուի.

* * *

Քայքայուելու ամենաեանի հասած Սպանիոյ 16 տարեկան թագաւորը անցեալ օրը իր կատարելահասակ լինելը հաշակեց և գահ բարձրացաւ. ազգային ժողովին հանդիսաւորապէս ներկայանալ երթալու միջոցին մարդ մը ատրճանակ պարպեր է մանուկ թագաւորին վրան. թերթերը կը հաղորդեն որ փորձ բնաղը անիշխանական չէ, այլ խենթի մը. Սպանիոյ մէջ հակակառավարական խլրտումները առայժմ ճնշուեցան, բայց չը գիտցուիր թէ մանուկ թագաւորին քայքայուած, յետամնաց, գժգոհ ու բուռն տարրերով լեցուն Սպանիան կառավարելու գժուարին գործին մէջ ինչ պատահարներ կսպասեն.

ԿԷՏ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բրովիանէս. 27 ապրիլ 1902

Թիւ 402 «Նարժումի միջոցաւ երեւցած թղթակցութիւնէս վերջ Բոնսթ Նցայի Բ. Յակոբ Դասաւորեանի վրայ ընթերցողներուն հաստատ համոզում գոյացնելու համար, այս անգամ երկու նմոյշ միայն առնեմ.

1. 95էն սկսեալ՝ կոտորածի տարիներու չորրին մէջ, ընդհանրապէս հայերը գաղթականութեան հոսանքին ենթարկուած էին. Կ. Պոլսէն դէպի արտասահման, և գաղթականութիւնը ալ աւելի ստուար թիւ մը կազմեց, մասնաւորապէս Պուլկարիոյ մէջ 96ի կոտորածի ժամանակ սակայն՝ այդ փոքր Պալքանը նեղ կուգար հայոց, իրենց օրական պարէնը հայթայթելու համար. ուստի ստիպուած էին գաղթել անոր սահմանակից երկիրները, մասնաւորապէս Ռումանիա. ու յաջողած էին վերջապէս անցնիլ շատ փոքր թիւով մը.

97ի օգոստոսի սմուն էր. երբ ռումանական կառավարութիւնը սաստիկ հալածանքի ենթարկեց երկրին մէջ գտնուող հայերը, անցագրի պատճառով. չնորհիւ Մարգասպանին. Այդ հալածանքը թէեւ ընդհանուր էր. բայց Քոնսթանցայի համար մասնաւոր: Ցերեկները միայն բաւական չէր ձերբակալութիւններ և բանտարկութիւններ, գիշերնին ալ սենեակները մտնելով քընացած ժողովուրդը կը ձերբակալէին ու կը բանտարկէին, թէ անցագիր չունեցողն և թէ ունեցողն որոնց ժամանակը անցած էր. այսպէս բանտարկուողներուն թիւը մօտաւորապէս 40ի հասած էր: Սեւաղբեստ քահանային բաղդը ժպտած էր. ուստի պէտք էր պատեհութենէն օգտուիլ. (այս անգամ ցաւը կրկնապատկը հայ կղերական մրն է) անոչխարի մերթով մտաւ բանտարկեալներու մէջ և իր փրկանք, 30ական ֆրանք պահանջեց որպէսզի կարողանայ ոստիկանութեան պեսը կաշառել և ազատել զիրենք բանտէն ու (*) աքսորանքէն.

Ի զուր բանտարկեալները կաղաչէին որ. եթէ կարելի էր ղեղչեն. վերջապէս խեղճերը ճարահատ պարարք ընելով, 20-30 վճարեցին. բայց հակառակ անոնց խոստացածին, տակ ուին կը շարունակէին բանտ մնալ. Մի օր ոստիկանութեան պեսի խիղճը արթնցաւ, և բանտարկեալները ազատեցան կանչեց, ու հետեւեալ բառերը արտասանեց. «Թէեւ բարձրագոյն հրամանին համեմատ ղեկ պէտք էր աքսորէի Թուրքիա, սակայն խիղճս զիս տանջեց, վասնզի դուք անմեղներ էք, և սուրէն փախչողներ. ուստի ազատ էք. բայց եթէ լսեմ որ՝ ձեզմէ մէկը իրը կաշառք իմ անուանս մէկ պան (սէնթ) տուած ըլլայ կրկին պիտի ձերբակալեմ ու աքսորեմ զայն». բանտարկեալները դուրս ելան առանց քահանային և Գաբրիէլ Գալանճեանի բարեխօսութեան. բայց ցաւալի է ըսել թէ՝ երբ իմացաւ ոստիկանութեան պեսը որ իր անուան բանտարկեալներէն դրամ հաւաքեր են. վճարողները կրկին ձերբակալեց և աքսորեց Պուլկարիա. իսկ ազատ մնացին անոնք, որոնք յամառեցան վճարելու. և առանց ապացոյց երկու կարգի մարդոցմէն ալ հոս կան, պէտք ըլլայ կարող եմ փաստել: Անշուշտ ընթերցողը կրցաւ գիտնալ թէ այնչափ դրամը քահանան և իր մեղսակիցը բաժանելով ճաշակեցին.

2. 99 սեպտեմբերին թէ հոկտեմբերին էր երբ քիւրտ Մէհմէտը սպաննեց Բագեշի Բարսեղ Կարապետեան անունով երիտասարդ մը. վիրաւորուած հայը թէեւ ապրեցաւ մէկ շաբաթ հիւանդանոցին մէջ բայց ան է հայու արգիլուած էր անոր հետ տեսակցելու, բայի քահանային. որովհետեւ կառավարութիւնը կաշառուած էր Թուրքերէն. բայց քահանան ոչինչ չէր յայտնէր անոր խօսածներէն. ես չեմ գտեր թէ անպատճառ քահանան ալ կաշառուած էր. բայց մինթէ դուն չե՞ս կասկածիր սիրելի ընթերցող: Պանդուխտները հանգանակութիւն մը բացին թաղման ծախսերը հոգալու որովհետեւ աղքատ էր. և հազիւ փոքր գումար մը հանգանակեցին ու այդ դրամէն հատարսկ մնոելաքառ

(*) Որովհետեւ կառավարութեան հրամանն էր արտաքսել երկրէն անցագիր չունեցողները.

մը վարձեցին քանի որ գոհ մը էր։

Թաղման հանդէսը լմննալէն վերջը, ներկաներէն մին մօտեցաւ քահանային և ձեռքին մէջ վեց ֆրանք դնելով ըսաւ. գիտես որ աղքատ էր և հանգանակեցիք այս դրամներն։ Բայց քահանան չը նայելով այնչափ բաղմութեան ուր ներկայ էին նաեւ Ռումաններ և յոյներ, բարկութեամբ դրամը գետին նետելով բացականչեց. «աղբա՛ր, ինչո՞ւ քսան ֆրանք կուտաք կառք կը բռնէք և ես ձեր պապային խղմէտքե՞ն եմ որ չորս ժամ աշխատիմ և իմ արդար իրաւունքս չի տաք» բաղմութիւնը սկսաւ խռնուիլ և սակայն ներկաներէն մին խոհեմութեամբ մօտեցաւ և երկու ֆրանք եւս իր գրպանէն աւելցնելով կրցաւ Տէրտէրին «կոշտ» ձայնը կտրել. և՝ օտարներու առջեւ «հայոց պատիւը» բարձր պահել։

Նպատակս չէ սրտերը յուզել. միայն թէ ցուցնել իրեն որպէսզի եթէ կարելի է զգաստանայ. մէկ կողմ ձգելով իր այդ վատ գործունէութիւններն, և դէպի պանդուխտները ունեցած պաղ վերաբերումը։

Կորիւն

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏԻՆ ՊԶՏԻԿ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Գիտէք արդեօք ի՞նչ է դերասանական արհեստը, թատերաբեմի գաղտնիքին տեղեակ էք թէ ոչ, ի՞նչ է տեսիլներու դարձուածքը, «Մուվըմանները». «Քոտը սէն»ը, «աքսան»ները և դէմքի արտայայտութիւնքը. քանի որ ասոնց տեղեակ չէք և քանի որ «Միքէլ Թօթոյի» «լ'արտիւ թէաթրը» անուն գիրքը չէք կարդացեր, ի՞նչպէս կը յանդգնիք դերասանները ըստ ձեր քմաց արհեստականպէս քննադատել. պ. Սեփոն Գալբաքճեանը ի՞նչպէս կը գովես քանի որ դեռ նա արհեստին մէջ իւթիւլիկէի դերերուն մէջ անգամ կարող չէ իբր դերասան փայլիլ. կարելի է դուք անոր խռպոտ ձայնը և տհաճ ձեւերը ձեր ճաշակին յարմար գտած էք. կը զարմանանք որ դուք ձեր ուղեղային կարողութենէն շատ վեր գրած էք. և ոնկարոզը կարողէն զանազանելու կատարեալ խոհունակութիւն չունիք. կը յուսանք որ յառաջիկայ շրջանին երբ Փիլիպէ Դառնանք գձեզ կստարեալ խելացի և խոհուն քննադատ մը կը տեսնենք։

Դերասան մը

—o—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեան Իտալիայէն յատուկ գրութեամբ մը պատրիարքէն խնդրեր է որ Պուլկարիոյ և Ռումանիոյ Հովվութեան պաշտօնը իրեն յանձնուի։

— Դամասկոսի Օմմիաններու հին թանգարանին բակին մէջ շատ մը չուսումնասիրուած հայերէն ձեռագիրներ գտնուեր են։ Գանձառուն մը ալ գտնուեր է Պոնտոս Ագհիսարի մէջ։

— Հռչակաւոր երգահան Տիգրան Զուհաճեանի կարգ մը աշակերտներուն ու համակիրներուն մէջ հանգուցեալին գերեզմանին վրայ մահարձան կանգնեցնելու գաղափարը յղացուեր է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Տասնեակ հազարներով հայեր մորթել տուող, հայ տուներ քանդել տուող Սուլթանը 20,000 ֆրանք նուիրեր է Մարթինիքի արկածեալներուն։

Կատարեալ եւրոպական թագակիր։

— Պոլսոյ պաշտօնական շրջանակներու մէջ լուր կը պտտի որ մեծ վէզիր Սայիտ փաշան հրաժարական պիտի տայ, որովհետեւ իրատէով հրամայուած է պաշտօնեաներուն ամսական մը վճարել. իսկ պետական գանձարանը դատարկ է։

— Ռուվէի թրքական պատքերու միացման համար կազմած ծրագիրը փոփոխութեան պիտի ենթարկուի եղեր։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պոլսոյ պուլկար էքզարխը շնորհակալութեան նամակ մը ղրկեր է Ֆէրտինանտ Իշխանին, ի պատասխան Իշխանի շնորհաւորական հրովարտակին, որով վերջինս ներմօրէն շնորհաւորած էր էքզարխին գործունէութեան քսանհինգամեակը։

ՌՈՒՍԻԱ

Բօրէդօնօսցէֆ, սինոդի հռչակաւոր բրօքօրօրը հրաժարականը պիտի տայ եղեր, ներքին գործոց Նախարարին հետ ունեցած ընդհարումի մը պատճառով։

Նախարար Վիթէ յայտարարած է թէ Ռուսիա միշտ դաշնակից պիտի մնայ Ֆրանսայի, անոր նախարարութիւնը որ կուսակցութենէն ալ կազմուի։

— Բէրլին քաշուած հեռագիր մը կը հաղորդէ որ Քօրէայի պաշտօնեաները Քօրէայի մէջ ռուսներէ հաւատացած հեռագրական թելերը կտրեր են։ Այդ մասին Սէուլի Ռուսիոյ ներկայացուցիչը խիստ բողոք ըրեր և պահանջեր է որ անմիջական գոհացում տրուի։

— Վիլնայի նահանգապետը սպանել փորձեր են։ Երկու տեղէ վիրաւորուեր է, բայց վէրքերը մահացու չեն։

— Լուպէ Բեթերսպուրկ հասեր և փառաւոր կերպով ընդունուեր է Ցարէն։

ՖՐԱՆՍԱ

Մայիս 6ին Բարիզի Սորպոնի հրապարակին վրայ մեծ շքով արձան կանգնեցուցեր են Բոզիթիւսդ փիլիսոփայ Օկիւստ Քոնթին յիշատակին։ Հանդէսին նախագահեր է պատերազմական նախարար ժէնէրալ Անդրէ։

— Բժիշկ մը տեղեկագրով մը դիմած է ֆրանսական կառավարութեան որ 30 տարեկանէ վար օրիորդներուն և կիներուն դորսէ կրելը արգիլուի։

ԹՐԱՆՍՎԱԼ

Լոնտոնէն կը հաղորդեն որ հաշտութեան խնդրոյն մասին շրջող բոլոր ղրոյցները անհիմն են, որովհետեւ բանակցութիւնները գաղտնի պահուած են ցարդ։

— Զէմպէրլէն յայտարարեր է թէ՝ կը յուսայ որ հաշտութիւնը կնքուի, բայց Անգլիա պիտի յամառի իր որոշումներուն վրայ։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

«ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Դիւցազնօրէն»ը ի նպաստ Հայ Ուսանողական Միութեան։

Գինն է 1 լէֆ արծաթ։

Կը ծախուի նաեւ «Ղարիպի Ազատութեան Ճանապարհին»։

Գինն է 90 սանթիմ

Վառնա

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

——

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻՆ

Ա. Զ. Դ.

Մանուկ Տէր Մանուէլեան 55-60 տարեկան սպիտակահեր Վանի կարգկանոն Օղվանց գիւղացի, տարիէ մը ի վեր է Սուլինայէն մեկնած է Ռումանիոյ Կրայիովայ և Քուրտայ-տի-Արճէլ քաղաքներ և անկից ի վեր անյայտ եղած է, իրմէ տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի հաղորդել Սուլինա պրն. Մանուկ Յակոբեանին։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՌԻՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ռուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Ռենիոն տէ Զէղիւտիան Ասմ.
լ'Էսորդ ռիւ տը լ'Էֆոլ տը Շիմի 2
Սուիս Ժընէվ
Կարգոդիր Յանձնաժողով

ՆՕԹԱՑՈՎ ԵՐԳԵՐ

Փիլիպէի Հայկ. Երգեցիկ խումբը պատրաստ ունի հետեւեալ քառաձայն երգերը։

«Մեր Հայրենիք», «Մայր Արարատ» և «Զիմգլխին ֆաթէն կիտամ», «Լռեց ամպերը», (Կարա Մուրզա), «Ի մարտ—քաւ է որքան», «Վրէժ—թող կորնչին» մէկական երես 15 սանթիմ։

«Արիք Հայկազունք», «Ես լըսեցի մի անուշ ձայն», և «Օյնաղան»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) երկուքական երես 30 սանթիմ։

«Ռազմերգ—Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ։

«Գնացէք տեսէք ո՞վ է կերել զէծ» և «Լեփօ լէ լէ»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) «Կախազան—բերին աթոռ ելա» 4ական երես 60ական սանթիմ։

Արտասահմանի համար մէկ երեսը 20 սանթիմ։

Փիլիպէ Հայի. Երգ.—քաստր. Խումբ

Հասցէ
Յակոբ Սրվաճեան
(Փիլիպօբլ)

L'EUROPEEN

—o—

Շաբաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական եւ դեղարուեստական։

Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна